https://doi.org/10.46991/hc.2023.20.2.112

Coverage in the armenian historiography of the work of the rear of Soviet Armenia during the Great Ppatriotic War

Volodya Gasparyan
https://orcid.org/0000-0003-4525-8040
Candidate of Pedagogical Sciences, Researcher at the Institute of Armenian Studies of YSU
gavolodya@yahoo.com

Key words: Great Patriotic War, Soviet Armenia, rear, front, agriculture, industry, ammunition, food, enterprises, culture.

Not only the Armenian soldier made an outstanding contribution to the victory of the Great Patriotic War, but also the entire Armenian people. Owing to the daily heroic work of the workers of industry sector of Soviet Armenia, 30 new industrial enterprises were put into operation during the war years, and 300 new types of products were mastered by the industry, including 10 types of weapons. Owing to agricultural workers, plans to supply the front with bread, meat, butter, tobacco and drinks were fulfilled. The Armenian intelligentsia also provided significant assistance to the front, putting all their strength into the cause of victory. In this sense, coverage of the heroic labor of the workers of Soviet Armenia during the Great Patriotic War was one of the important issues of Armenian historiography. Over the past years, monographic and collective works devoted to the problem have been created, many articles have been published, a collection of documents and materials has been compiled, etc. However, this noble cause would be more beneficial if a general work was created in Russian and other languages that would familiarize a new generation of post-Soviet countries and the world community with the achievements of Armenian working circles in achieving victory in the Great Patriotic War and the achievements of Armenian historiography in the field of research of the issue.

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքի լուսաբանումը հայ պատմագրության մեջ

Վոլոդյա Գասպարյան
մանկ.գ.թ., ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտական աշխատող

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 112-120.
Received: 25.01.2023
Revised: 02.11.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

Հիմնաբառեր՝ Հայրենական մեծ պատերազմ, Խորհրդային Հայաստանի, թիկունք, ռազմաճակատ, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, զինամթերք, սննդամթերք, ձեռնարկություն, մշակույթ:

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի գործում ոչ միայն հայ զինվորն ունեցավ իր ակնառու ավանդը, այլև ամբողջ հայ ժողովուրդը: Շնորհիվ Խորհրդային Հայաստանի արդյունաբերության բնագավառի աշխատավորների ամենօրյա հերոսական աշխատանքի, պատերազմի տարիներին շահագործման հանձնվեցին 30 նոր արդյունաբերական ձեռնարկություններ, արդյուանաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակներ, որոնց թվում 10 զինատեսակի արատդրություն: Գյուղատնտեսության բնագավառի աշխատողների շնորհիվ ժամանակին կատարվում էին ռազմաճակատի համար նախատեսված հացի, մսի, յուղի, ծխախոտի, խմիչքի մատակարարման պլանները: Ռազմաճակատին զգալի օգնություն ցույց տվեց նաև հայ մտավորականությունը, որոնք իրենց ողջ հնարավորությունները ներդրեցին հաղթանակի կերտման գործին: Այս առումով էլ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքի լուսաբանումը եղել է հայ պատմագրության կարևոր հիմնահարցերից մեկը: Տարիների ընթացքում ստեղծվել են հիմնահարցին նվիրված մենագրական ու կոլեկտիվ աշխատանքներ, հրատարակվել բազմաթիվ հոդվածներ, կազմվել փաստաթղթերի ու նյութերի ժողովածու և այլն: Սակայն այդ շնորհակալ գործը ավելի կշահեր, եթե ռուսերեն ու այլ լեզուներով ստեղծվեր մի ընդհանրացնող աշխատություն, որը հետխորհրդային երկրների նոր սերնդին ու համաշխարհային հանրությանը կծանոթացներ Մեծ հայրենականում հաղթանակի հասնելու գործում հայ աշխատավորության ավամդին ու հիմնահարցի հետազոտության բնագավառում հայ պատմագրության նվաճումներին:

Освещение в армянской историографии работы тыла Советской Армении в годы Великой Отечественной Войны

Володя Гаспарян
Кандидат педагогических наук, научный сотрудник Института арменоведения ЕГУ

Ключевые слова: Великая Отечественная война, Советская Армения, тыл, фронт, сельское хозяйство, промышленность, боеприпасы, продовольствие, предприятия, культура.

Не только армянский воин внес выдающийся вклад в победу Великой Отечественной войны, но и весь армянский народ. Благодаря ежедневному героическому труду тружеников промышленности Советской Армении за годы войны было введено в строй 30 новых промышленных

предприятий, промышленностью освоено 300 новых видов продукции, в том числе 10 видов вооружения. Благодаря труженикам сельского хозяйства были выполнены планы по снабжению фронта хлебом, мясом, маслом, табаком и напитками. Значительную помощь фронту оказала и армянская интеллигенция, вложившая все свои силы в дело победы. В этом смысле освещение героического труда тружеников тыла Советской Армении в годы Великой Отечественной войны было одним из важных вопросов армянской историографии. За прошедшие годы созданы монографические и коллективные труды, посвященные проблеме, опубликовано множество статей, составлен сборник документов и материалов и т. д. Однако это благородное дело принесло бы больше пользы, если бы на русском и других языках было создано обобщающее произведение, которое ознакомило бы новое поколение постсоветских стран и мирового сообщества с достижениями армянского труда в достижении победы в Великой Отечественной войне и достижениями армянской историографии в области исследования вопроса.

* * *

Ներածություն: Հայրենական մեծ պատերազմի 1941-1945 թթ. հաղթանակի գործում ոչ միայն հայ զինվորն ունեցավ իր ակնառու ավանդը, այլև ամբողջ հայ ժողովուրդը: Մասնավորապես՝ Խորհրդային Հայաստանի աշխատավորության հերոսական աշխատանքի շնորհիվ պատերազմի տարիներին հանրապետությունը վերածվեց Կարմիր բանակի մարտական զինանոցի, որտեղից՝ «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով ամեն օր տասնյակ գնացքակազմերով ռազմաճակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, զենք, զինամթերք, հանդերձանք, սննդամթերք և այլն: Պատերազմի տարիներին հանրապետությունում շահագործման հանձնվեց 30 նոր արդյունաբերական ձեռնարկություն, այդ թվում՝ ավիացիոն, ժամացույցների, շարժիչանորոգման, կոմպրեսորների, ավտոդողերի և այլ գործարաններ: Արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակների թողարկումը, այդ թվում՝ 10 տեսակի զինամթերքի, ականանետների, ականների, նռնակների, ավիառումբերի կորպուսների, թեթև ուսումնավարժական ինքնաթիռների, ռադիոտեխնիկական սարքերի, կաուստիկ սոդայի, ծծմբական թթվի, հեղուկ քլորի, քրոմի անհիդրիդի, քլորաֆորմի և այլ տեսականու արտադրությունը [Советская Армения в годы Великой Отечественной войны 1941—1945 Сборник документов и материалов 1975, 307—310]:

Գիտություն, մշակույթ,գյուղատնտեսություն և այլն: Գյուղատնտեսության բնագավառի աշխատավորների, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում կանայք, տարեցներն ու դպրոցականները, պատերազմի հաշմանդամները, հերոսական ջանքերի շնորհիվ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալի չափով ավելացան դրանք. այսպես, օրինակ, ցանքատարածություններն ավելացան 40 000 հեկտարով [Советская Армения в годы Великой Отечественной войны 1941—1945 Сборник документов и материалов 1975, 313]: Դեռ ավելին, գյուղատնտեսական ավանդական մշակաբույսերի հետ սկսեցին արտադրվել մեծ քանակությամբ նոր տեխնիկական մշակաբույսեր՝ ծխախոտ, ճակնդեղ, ինչպես նաև երկրորդ հացը՝ կարտոֆիլ: 1940 թ. համեմատությամբ 1000 հեկտարով ավելացավ շաքարի ճակնդեղի

ցանքատարածությունները, 3000 հեկտարով՝ խաղողի, 5000 հեկտար այլ մրգերի այգիների տարածքները [Советская Армения в годы Великой Отечественной войны 1941—1945 Сборник документов и материалов 1975, 314]:

Զգալի հաջողություններ ձեռք բերվեցին անասնապահության բնագավառում: 1945թ. հունվարի 1-ին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1941թ. հունվարի 1-ի համեմատությամբ ավելացավ 11 200 գլխով, իսկ ոչխարների ու այծերի գլխաքանակը՝ 196 135 գլխով և այլն:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքի լուսաբանումը հայ պատմագրության կարևոր հիմնահարցերից է:

1975թ. Հայաստանի կոմկուսի կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտի, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին կից արխիվային վարչության աշխատողները ռուսերեն հրատարակեցին այդ տարիներին հանրապետության աշխատավորների գործունեությանը վերաբերող «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945)» փաստաթղթերի ու նյութերի ժողովածու [Советская Армения в годы Великой Отечественной войны 1941—1945. Сборник документов и материалов 1975, 838]: Այն բաղկացած է 5 բաժնից: Դրա երկրորդ՝ «Սովետական Հայաստանը՝ ռազմաճակատում» բաժնում (էջ 26—241) և չորրորդ՝ «Սովետական Հայաստանը թիկունքում ծավալված համաժողովրդական պայքարի մասնակից» բաժնում (էջ 643—703) զետեղված փաստաթղթերը վերաբերում են թիկունքին: Այդ փաստաթղթերում ներկայացված է պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի բանվորների, ինժեներատեխնիկական մասնագետների, գյուղատնտեսության աշխատողների և մտավորականության կատարած հերոսական աշխատանքը: Այսպես, օրինակ, 236 թվակիր փաստաթուղթը, որը 1945 թ. հունիսի 22-ին կազմվել է Հայկական ԽՍՀ ժողկոմխորհում, վերաբերում է հանրապետության արդյունաբերության հիմնական ցուցանիշներին, 239-րդ փաստաթուղթը ՀԽՍՀ ժողկոմ Ս. Ղազարյանի՝ «Հայաստանի գյուղատնտեսությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» վերնագրով հոդվածն է՝ տպագրված «Խորհրդային Հայաստան» թերթի 1945 թ. նոյեմբերի 11-ի համարում, 196-րդ փաստաթուղթը ակադեմիկոս Հովսեփ Օրբելու՝ «Հայաստանի գիտնականները պատերազմի օրերին» վերնագրով հոդվածն է, որը տպագրվել է «ԲԳԿԲ մարտիկ» թերթի 1943թ. դեկտեմբերի 30-ի համարում և այլն: Վերոհիշյալ փաստաթղթերի ժողովածուն այսօր էլ արժեքավոր սկզբնաղբյուր է Հայրենական մեծ պատերազմին հայ ժաղովրդի մասնակցության հիմնահարցով զբաղվող մասնագետների համար:

1975 թ. լույս տեսավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Նավասարդի Մնացականյանի «Միասնական շարքերում» մենագրությունը [Մնացականյան. 1975, 490], որի առաջաբանը գրել է Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը: Հեղինակը հարուստ փաստական նյութերի քննական վերլուծությամբ և հրապարակախոսական ակնարկային ոճով լուսաբանում է Կարմիր բանակի միասնական շարքերում հայ ժողովրդի զավակների ավանդը ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում: Գիրքը բաղկացած է առաջաբանից, ինը բաժնից և եզրափակումից: Գրքի հինգերորդ բաժինը նվիրված է թիկունքին և կոչվում է՝ «Հայաստանի աշխատավորության ավանդը», որտեղ առանձին ենթաբաժիններով

լուսաբանվել է բանվոր դասակարգի, գյուղի աշխատավորների և մտավորականության հերոսական աշխատանքը պատերազմի տարիներին [Մնացականյան. 1975, 275—321]:

1978 թ. պատմական գիտությունների թեկնածու Հայրապետ Շատվորյանը հրատարակեց «Թիկունքում ինչպես ռազմաճակատում» աշխատությունը [Շատվորյան. 1978, 123]: Աշխատության մեջ ներկայացված է Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի կոմկուսի գործունեությունը հանուն հանրապետության պաշտպանության կազմակերպման և ռազմաճակատի համար մարտական պահուստների ստեղծման: Արխիվային հարուստ նյութերի, մամուլի և այլ աղբյուրների հիման վրա հեղինակը լուսաբանել է կուսակցական և խորհրդային մարմինների գործունեությունը կործանիչ գումարտակների, ժողովրդական աշխարհազորի ջոկատների ստեղծման, պաշտպանական կառույցների շինարարության, բնակչության հակաօդային և հակաքիմիական պաշտպանության և այլ խնդիրներում:

Չնայած գրքում կարմիր թելի պես ձգվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության բացառիկ դերը հանրապետության պաշտպանության ամրապնդման նպատակով աշխատավոր զանգվածների մոբիլիզացման գործում, սակայն գերագնահատվում է կուսակցության դերը թիկունքի աշխատանքները կազմակերպելու և ղեկավարելու գործում, ինչը վարչահրամայական հասարակարգում մեկ կուսակցության կատարածի գերագնահատում է, այնուամենայնիվ օգտագործված փաստական նյութերը հնարավորություն են տալիս մեզ այսօրվա դիրքերից օբյեկտիվորեն գնահատելու պատմական եղելությունը: Հ. Շատվորյանի աշխատությունն այսօր էլ չի կորցրել իր պատմագիտական արժեքը և կարևոր սկզբնաղբյուր է պատերազմական տարիների Խորհրդային Հայաստանի պատմությունն ուսումնասիրողների համար:

1979 թ. լույս տեսավ պատմական գիտությունների թեկնածու Քնարիկ Գրիգորի Գրիգորյանի՝ «Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945)» մենագրությունը [Գրիգորյան. 1979, 198]: Աշխատությունը շարադրելիս հեղինակն օգտագործել է արխիվային նյութեր, թեմայի վերաբերյալ հրատարակված աշխատություններ, միութենական, հանրապետական, շրջանային ու ռազմաճակատային մամուլը և այլ վավերագրեր: Աշխատության երեք գլուխներից առաջինում լուսաբանվել է պատերազմի պահանջներին համապատասխան գյուղատնտեսության վերակառուցումը երկրորդում՝ թիկունքը՝ որպես ռազմաճակատի ամուր հենարան, երրորդում՝ Հայաստանի կոլտնտեսականների հայրենասիրական շարժումը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությանն է նվիրված պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիկտոր Մուրադյանի ռուսերեն մենագրությունը [Мурадян, 1984, 364]: Գրքի վեց գլուխներում համակողմանիորեն լուսաբանվել են Հայաստանի կոմկուսի դերը աշխատավորությանը ֆաշիստական Գերմանիայի դեմ պայքարի մղելու գործում, կուսակցական-կազմակերպչական աշխատանքը, կուսակցական մարմինների ռազմամոբիլիզացիոն գործունեությունը, կոմկուսի գործունեությունը ռազմական տնտեսության կազմակերպման և զարգացման բնագավառում, կոմկուսի գործունեությունը հանրապետության թիկունքի աշխատավորների և ռազմաճակատի

կապի ամրապնդման գործում, գերմանաֆաշիստական զավթիչներից երկրի ազատագրված շրջաններին համաժողովրդական օգնություն ցուցաբերելու հիմնահարցերը:

Թեպետ աշխատությունն իր վրա կրում է վարչահրամայական այդ ժամանակաշրջանի համապատասխան կարծրատիպ դավանաբանության կնիքը, այնուհանդերձ, այսօր էլ չի կորցրել իր պատմագիտական արժեքը և կարևոր սկզբնաղբյուր է Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատանքը ուսումնասիրողների համար:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կոնստանտին Խուդավերդյանի ռուսերեն աշխատությունը Հայրենական մեծ պատերազմի տարիների խորհրդահայ մշակույթի մասին է [Худавердян. 1985, 129]: Սկզբնաղբյուրների հիման վրա հեղինակը լուսաբանել է հայկական խորհրդային մշակույթի զարգացման պատմությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, բացահայտել մշակույթի գործիչների ու բնագավառի աշխատողների հայրենասիրական-դաստիարակչական գործունեությունը, նրանց ավանդը թիկունքի և ռազմաճակատի կապերն ամրապնդելու, թշնամու դեմ հաղթանակի հասնելու գործում:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդի մասին Հայաստանի նորանկախ հանրապետության ժամանակաշրջանում հայ պատմագրության մեջ նոր խոսք է պատմական գիտությունների դոկտոր Հրաչիկ Մանուկյանի մենագրությունը [Մանուկյան, 2000, 183]: Հեղինակը արխիվային հարուստ փաստերի հիման վրա առաջին անգամ հայ պատմագրության մեջ կատարել է ընդհանրացնող ուսումնասիրություն: Առանց գաղափարական կապանքների նա նորովի է լուսաբանել պատերազմի պահանջներին համապատասխան հանրապետության արդյունաբերությունը վերակառուցելու գործընթացը, արդյունաբերության հետագա ընդլայնման և ռազմական արտադրանքի յուրացման ու արտադրանքի աճի ապահովման հիմնահարցերը, հանրապետության արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառների աշխատողների, ինչպես նաև մտավորականների հերոսական աշխատանքը, բացահայտել նրանց ներդրած ավանդը Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի հասնելու գործում:

Արդյունաբերությունը: 2005 թ. լույս տեսավ պատմական գիտությունների թեկնածու Գոհար Խաչատրյանի «Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945)» աշխատությունը [Խաչատրյան. 2005, 118]: Դրանում քննության են առնվել նախապատերազմյան տարիներին Հայաստանի արդյունաբերության զարգացման հիմնական միտումները, լուսաբանվել պատերազմի պայմաններին համապատասխան հանրապետության արդյունաբերության վերակառուցման և հետագա զարգացման, բանվորական կադրերի պատրաստման ու նյութատեխնիկական մատակարարման հարցերը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքի որոշ հարցեր լուսաբանվել են նաև պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանի աշխատություններում [Арутюнян. 2004, 866]: Իր բոլոր աշխատություններում ՌԴ և ՀՀ ռազմական, կուսակցական ու պետական արխիվների նորահայտ փաստաթղթերի հիման վրա համակողմանիորեն լուսաբանելով Հայրենական մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում և տարբեր զորատեսակների կազմում հայ ժողովրդի զավակների կատարած սխրանքները՝ հեղինակը միաժամանակ բացահայտել է Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքը, ինչի շնորհիվ

հանրապետությունը վերածվել էր Կարմիր բանակի իսկական զինանոցի, որտեղ ամեն ինչ կատարվում էր ռազմաճակատն ապահովելու և հաղթանակի համար:

Հայ պատմագրության մեջ նոր խոսք է նաև պատմական գիտությունների դոկտոր Կարեն Խաչատրյանի՝ «Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922—1991թթ.)» մենագրությունը [Խաչատրյան, 2015, 295—296]: Վերջերս գաղտնազերծված արխիվային փաստերի հիման վրա գրքում լուսաբանված է ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման և փուլային զարգացման ընդհանուր համատեքստում Խորհրդային Հայաստանի արդյունաբերության ու գիտության ներդրման հիմնահարցը: Հանրագումարի բերելով պատերազմի տարիներին ՀԽՍՀ արդյունաբերության զարգացման, դրանում պաշտպանական ոլորտի ձեռնարկությունների ձևավորման, հանրապետությունում ռազմապաշտպանական արտադրանքի թողարկման հիմնական արդյունքները՝ հեղինակը ցույց է տալիս, թե որքանով հանրապետությունում կառուցված ու գործարկված 30 նոր ձեռնարկություններն ու 110 արտադրամասերը նպաստեցին մեքենաշինության, մետաղամշակման, հաստոցաշինության, էլեկտրամեքենաշինության, քիմիական արդյունաբերության և այլ ոլորտների հետագա զարգացմանը [Խաչատրյան, 2015, 295—296]:

Առկա են մի շարք այլ աշխատություններ, որոնցում նույնպես այս կամ այն չափով լուսաբանվել է խնդրո առարկա հիմնահարցը: Մասնավորապես՝ ուշադրության են արժանի հետևյալ պատմաբանների՝ Ծ. Աղայանի, Ե. Խալեյանի, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, երրորդ պրակ, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ. 1960; Հայ ժողովրդի պատմություն հ .8, Ե., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1970;Շ.Ռ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 4 (1917—1968), Ե., «Լույս» հրատ., 1970; Հայոց պատմության, հ.4, գիրք առաջին, Ե., «Զանգակ» հրատ., 2010; Հայոց պատմություն, Ե., Երևանի պետական համալսարանի հրատ., 2012; Հ.Ե. Թումանյան, Հայկական ՍՍՌ-ի էկոնոմիկան Հայրենական մեծ պատերազմի շրջանում և նրա զարգացումը հետպատերազմյան առաջին հնգամյակում, Ե., Երևանի պետական համալսարանի հրատ., 1953; Կ.Ժ. Միրզախանյան, Հայաստանի կոմերիտմիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Ե., Հայպետհրատ, 1956; Արտեմ Հարությունյան, Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ե., Հայպետհրատ, 1958; Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., «Հայաստան» հրատ., 1967; Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն, Ե., «Հայաստան» հրատ.,1968; Կոզմո Կոզմոյան, Լենինական, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957; Կիրովական, 1960; Ալավերդի, ե., 1966; Հոկտեմբերյան, Ե., 1975; Հրազդան, Ե., 1986; Աբել Սիմոնյան, Երևան, 1920-1967, Ե., «Հայաստան» հրատ., 1971; Հ.Մ. Հարությունյան, Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակրջանում, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983; Степан Гарибджанян, Наука в Армении в годы Великой Отечественной войны (1941-1945), Е: Изд. «Гитутюн» НАН РА , 2007 և այլն:

Եզրակացություն: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների հերոսական գործունեության լուսաբանման ասպարեզում հայ պատմաբանների ավանդի մասին եզրակացնում ենք, որ այդ բնագավառում կատարվել է ոչ հեռավոր անցյալի իրողությունները բացահայտող կարևոր ու ակնառու աշխատանք: Ինչպես

խորհրդային, այնպես էլ հետխորհրդային շրջանում նրանք ստեղծել են հիմնահարցին նվիրված մենագրական և կոլեկտիվ աշխատություններ, հրատարակել բազմաթիվ հոդվածներ, կազմել փաստաթղթերի ու նյութերի ժողովածու և այլն:

Այդ շնորհակալ գործն ավելի կշահեր, եթե Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքին նվիրված մի ընդհանրացնող գործ ներկայացվեր ռուսերեն և այլ լեզուներով: Դրանով հետխորհրդային երկրների նոր սերունդը, համաշխարհային հանրությունը կտեղեկանա Մեծ հայրենականում հաղթանակի հասնելու գործում հայ աշխատավորության ավանդին, կծանոթանային հիմնահարցի հետազոտության բնագավառում հայ պատմագրության նվաճումներին:

1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի ծանր պայմաններում Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության վերակառուցումը՝ պատերազմական պայմաններին համապատասխան, միանգամայն ուսանելի է իբրև անցյալի փորձ: Ռազմաճակատի կարիքների համար ռազմական արտադրանք ստեղծելու, «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով աշխատող հայ բանվորի, գյուղացու և մտավորականի հերոսական աշխատանքն այսօր վառ օրինակ է Հայաստանի Հանրապետության՝ դեռ պատերազմական վիճակում ապրող ու արարող՝ բնակչության ամենալայն խավերի համար:

Գրականության ցանկ

Գրիգորյան Ք. 1979, Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945): Երևան, «Հայկ» ՍՍՀ ԳԱ, 198 էջ:

Խաչատրյան Գ. 2005, Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945): Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 118 էջ:

Խաչատրյան Կ. 2015, Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922-1991թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 345 էջ:

Հարությունյան Կ. 2001, Գրիգոր Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ.): Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» 154, 16 նկար էջ:

Հարությունյան Կ. 2002, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, Երևան, «Զանգակ-97» 248 էջ:

Մանուկյան Հ. 2000, Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941-1945): Երևան, «Ասողիկ» 183 էջ:

Մնացականյան Ա. 1975, Միասնական շարքերում: Երևան, «Հայաստան» 490 էջ:

Շատվորյան Հ., 1978, Թիկունքում ինչպես ռազմաճակատում, Երևան, «Հայաստան» 123 էջ:

Арутюнян К. 2004, Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945). Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 866 с.

Арутюнян К. Погосян Г., 2010, Вклад армянского народ в победу в Великой Отечественной войне (1941-1945), Ереван, 875 + 112 с.

Мурадян В. 1984, Компартия Армении в годы Великой Отечественной войны. Ереван, «Айастан», 364 с.

Советская Армения в годы Великой Отечественной войны 1941-1945). Сборник документов и материалов, Е.: Изд. АН Армянской ССР, 1975, 838 с.

Худавердян К. 1985, Армянская Советская культура в годы Великой Отечественной войны. Ереван, АН Армянский ССР 129 с.